

ճշգրտութեանն, որպէս, զիաքս, որպիսի, զիաքէս, ըստ որոյ, որգն»։ Այս բոլորը նմանութիւն կամ օրինակ ցոյց տուող մակրայներ են և հետեւարար այս նշանակութեամբ առնելու է նաև մատարկայ։ Յոյն բնազրին մէջ ասոր զէմ զրուած է Տէ ձեւ ու պարախօնչ դ ծմօւածաւ։ — Մատարկայ յն՝ ու պարախօնչ «համեմատութիւն, նմանութիւն, առակ» բառին ստրկական թարգմանութիւնն է (պաք «առ, բովլ, մատ-չիլ» թալաւ «արկանել» բառերէն կազմուած)։ հմմտ, ասարկայ։

Համամ. քեր. 276 միաւ կարդալով բառը՝ զրած է «իսկ որ ասէ թէ մարտկացն կամ ճշգրտութեանցն, մարտկացն հարցական լիի, իսկ ճշգրտութեանցն, որ զես ստուգագոյնս հարցմանմբ որ կամի ուսանել և ասէ. ո՞րպէս, զիաքէս...»։

Նոյն բառն է որ Բառ. երեմ. էջ 205 կը գրէ մատարակաց «ճշգրտեաց»։

17. մարքար

«Իսկ մեր ի Պարից բազում ինչ ընտաներար ուսեալ զգեստս, որպէս դուռա և ոփէց, մարքար, աւազան, որ է ջրոյ անօթ, գաւազան՝ որ է վարիչ արջառոյ, խարազան՝ որ է վարիչ իշոյ և այլք այսպիսի բազում, որ գրեթէ հասարակորդ է լեզուի մերոյ»։ (Մագ. քեր. 229)։

Ինչպէս Աղոնց ծանօթութեան մէջ կը նկատէ՝ արար շարար markab «հեծանելիք, զրաստ, էշ» բառն է, որ հիմայ ալ շատ սովորական է Օսմանեան թուրքերէնի մէջ՝ վերջին իմաստով։

18. ուխ

Այս անգոյ բառին վրայ տես թ. 10։

19. սուտրա

Օտար լեզուներէ փոխառեալ հայերէն բառերու վրայ խօսած ժամանակ Մագ. քեր. 228 իրը օրինակ կը բերէ «փակեղճ, որ է յունարէն, քանզի ոչ գոյր

մեր և ոչ էր սովորութիւն, և սուտրա, որ է սպիրոռ (այլ թ. սպիտուռ), և կուղամար, որ է կալամառ, այսինքն աման գրչի, և այլ ինչ բազում, զոր ընտանացեալ մեզ ունիմք»։

Այլուստ անծանօթ է սուտրա. տրուած բացատրութիւնը (սպիրոռ կամ սպիտուռ) նոյնպէս անծանօթ ըլլալով՝ անյայտ կը մնայ բառին նշանակութիւնը։ Աղոնց կը հանէ սուդրա ձեւէն, որով անշուշտ կը հասկնայ պրո։ սուդրա «է տեսակ իմ հանդերձի, որ և ասի գապաշէ, որոյ զրակն լինի մինչև ի մէջս, և թեզանից նորին ի յուսս, և է զգեստ ինչ յատկացեալ պարսկական ազգին»։

20. վարուտել

Բառիս վկայութիւնը տես թ. 11։ Կը նշանակէ «բոլորն ալ քշել, վարել»։

21. տարրա

Վկայութիւնը տես թ. 9։ Կը նշանակէ «մանուկ, փոքր տղայ»։

Հ. ԱՃԱԽԵԱՆ

Հանպա եւ մեք, ո՞լ միրելի ազգակիցք Ներսիսի, որք 44 դարէ ի վեր իին նահաւ պետի մը անուն կրեմք, եւ աւելի սոտոյդ նոգեւոր որդիք եւիք այնպիսի հայրապետաց՝ որք ի միջի հայրապետաց ամենայն ազգաց եւ ամոռոց՝ միայն կ'ամոռանին Լուսաւորէ եւ Շնորհալի։ Մեք՝ որ այնքան պնդութեամբ կը պահենք ամոռնը անունը, աւանդը եւ սէրն... նորոգենք եւ զօրացնենք այն սէրն ու երախտիցք՝ որոյ պարտական ենք եւ պիտի ըլլան մեր յետին թուռունք ալ։

«Շնորհալի և Պարագայ էւր»

Հ. ԱԿԻՏԱՆ